

յԱմուղերտամ, նախ ի Գաղղիա երթալով, և յԱմուղերտամ տպագրեց զայն 1666էն մինչև 1668:

Հայկական Հին քնագրին մէջ կը պակ- ունին Սիրաք, Երեմիա և Յայտնութիւն. և թուի թէ Ոսկան համարձակեր է իւր տպա- գրութեան մէջ անցընել Լատին Վուլկապոյէ թարգմանուած Սիրաքը, և ուրիշ թարգմանու- թեան վրայ թարգմանուած Յայտնութիւնը \* : Ոսկանայ գործն կրկին տպագրուեցաւ ի Կ. Պօլիս, յամին 1705: — Այս ամբողջա- կան տպագրութենէն զատ, առանձին առան- ձին հրատարակուեցան Աստուածաշնչի մա- սեր ալ. օրինակ իմն, Սաղմոսը, յամին 1666, յԱմուղերտամ, յամին 1680, ի Լիփսիա, — Նոր կտակարան, յԱմուղերտամ, 1668 և 1698ին:

Միթիթարեան Միարանութեան հաստա- տութեամբն յամին 1701 կը սկսի նոր զար մը: Արդէն Միթիթարայ, Միարանութեանն Հիմնադրին, կենդանութեան միջոց, 1733ին հրատարակուած էր ամբողջ Աստուածաշունչն, որ ոսկանեան տպագրութեան կրկին տպա- գրութիւնն էր: Յամին 1786, տպագրուեցան Սաղմոսը, և 1789ին, Նոր կտակարանն, ըստ նոյն ձեռագրաց:

Յամին 1805 կը սկսին քննադատական տպագրութիւնը. Հ. Զօհրայ հրատարակեց ի վննետիկ, 1805ին, բովանդակ Աստուա- ծաշնչի քննադատական տպագրութիւն մը, քառածալ և ութածալ կրկին զիրքերով: Այս աշխատութեանն հիմն զրած է 1319 թուա- կանի ձեռագիր մը, և ուրիշ սասնեւինն նո-


րադոյն ձեռագիրներ համեմատած է: Ասոր մէջ Սիրաքն թերակատար է: — Վննետիկ տպարանին մէջ զանազան ժամանակ յաճախ տպագրուեցան Սաղմոսը, զերջին անգամ 1856ին, Գիրք Իմաստութեան (Սողոմոնի) 1824 և 1854ին (յոյն և շատիկ քննագիր- ներով), Գործք Առաքելոց և թուղթը Առա- քելականը 1824ին, զերջին անգամ ըս- ըր Նոր կտակարանն յամին 1863, Աւե- տարանը միայն, 1869: — Այս միջոցին, Հին ձեռագրի մը մէջ զանուեցաւ Սիրաքայ Հին թարգմանութիւնն, որ առանձինն տպա- գրուեցաւ 1833 և 1853ին: — Եւ այս բոլոր մասնական աշխատութեանց օգնութեամբ և ուրիշ Հին ձեռագիրներ ալ համեմատելով, յամին 1860, ամբողջ Աստուածաշնչի քննա- դասական նոր տպագրութիւն մը կատա- րուեցաւ\*\*:

Այս վննետիկան տպագրութիւններէն զատ, ամբողջ Հայերէն Աստուածաշունչն տպուե- ցաւ ի Փեղերսոպուրիկ, 1817ին, և ի Մոս- կուա, 1836ին: — Վերջապէս վննական Միթիթարեանը տպագրեցին Նոր կտակարա- նը, յամին 1864\*\*\*:

Շարայարեկ



### Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն



Ա Ր Զ Ն

**Ա**ՐԶՆ. — Աղձնեացն ահա նոյն Հին գա- լաններէն մին, զրուած է նաև Արմն և Աղմն ձևերով: Օտար մատենագիրք են զանազան կերպերով զրած են զաւետիս անունն, ինչ- պէս Արքաւանի, Արգանիթի, Արդուն, և այլն: Գաւառիս սկզբնական պատմութիւնն, ինչ- պէս նաև անուան ստուգաբանութիւնն տա- կաւին անձանօթ են: Խորենացոյն պատ- մութիւնն կը տեղեկանանք որ Սանասարայ ցեղէն ոմն Շարաշան երբ կուսակալ զրուե- ցաւ մեր աշխարհի արևմտեան հարաւային կողման, այս զաւատս ալ իրեն պարզե տը- րուեցաւ: Թ. Արծրունիին զաւատս կը հա-

vangiles que j'ai trouvé à la bibliothèque du roi, et que j'ai copié pour mon usage, m'a exactement informé de toutes les additions dont cet Evêque arménien à interpolé son édition. A mon grand regret, je n'ai aucun manuscrit des Actes et des Epîtres ».

\* Հմտ. Մատնն. հայկ. թարգման. Սահմնաց. Վննետիկ. էջը 221-225:

\*\* Այս տպագրութեանը պատրաստած և կատարած է Հ. Արսէն Բագրատունի, համեմատելով նաև յոյն քննագրի նաև:

\*\*\* Աստուածաշունչի քրոց ամբողջական և մասնական զանազան տպագրութեանց մասին Հմտ. Հայկական Մատննագիրութիւն. Վննետիկ. 1883:

մարի նախկին բնակավայր Արծրունեաց սոհ-  
մի, և այդ պատճառաւ կը կարծուի, թէ  
կոչուած են նախ Արգրոսնիք և ապա փո-  
փոխմամբ Արծրոսնիք: Այս կարծեաց ճշ-  
գումբինն կամ անճշգումբինն առանց կա-  
րենալու հաստատել, բանք միայն, որ  
Արծրունեաց ցեղի վերջին շատախոյններն եւս  
տիրած են այս գաւառիս: Ասողիկ կը յի-  
շէ գաւառիս մէջ Ագրոս անուամբ քաղաք:  
Արզն սահմանակից է Տուրքերանի Խոյթ  
և Ասպակունիք գաւառաց. այժմ կը կոչուի  
Խարզան: Երկիրը լեռնային է, ունի նաև  
գետակներ. բնակիչներն են հայ և քուրդ:  
Գաւառիս մէջ կայ այժմ Խարզան անուամբ

այլազգանակ գիւղ մը որ կը կարծուի թէ  
լինի հին Արզն քաղաքի տեղը: Արզնի հայ  
բնակիչք կորովի են և քաջ:

Ա Ր Զ Ն Ի

Արզնի կամ Արճնի. — Ի հնունե քաղ-  
մամարզ և զուտ հայաբնակ գիւղս, այժմ  
ունի միայն 110 տուն օտարազգի բնակիչ-  
ներ: Կ'իյնայ Այրարատայ կոտայք գաւառի  
մէջ, Հրազդան գետայ ձախակողմը, Նուա-  
նուս և Քիլդան գիւղերու մէջտեղ: Այլազ-  
գիք գիւղս կը կոչեն Սարաչլու: Արզնիի



Արզն == Խարզան:


հին մեծութեան վկայք են պարսպաց և  
բազմաթիւ ամայի տանց աւերակներն և  
մնացորդներն, ինչպէս նաև հին եկեղեցին:  
Պարիսպներէն զուրս հիւսիսային կողմը կան  
երկու մատուռնք տաշած քարերով շինուած,  
և գերեզմաններ հանդերձ խաչարձանօք:  
Գերեզմանատան մէջ գտնուած խաչարձարու  
արձանագրութեանց ծանօթ թուականք կը  
վերաբերին ԺՉԻ դարու: Մետրոլք արքե-  
պիսկոպոս Սմբատեանց, Հեռահեւլ կերպով  
կը ասուգարանէ Արզնի անունն. « Արզնի  
բաճն ստուգարանի Արայն գնեի. այն է՝  
Արայն յետ սպանմանն ի Շամիրամայ՝ աստ  
գննի, ըստ որում Շամիրամայ անունով

լերան մօտ է գիւղն »: ԺԵ դարու կիսուն  
կը յիշուի գիւղիս անունն ճաշոցի մը յի-  
շատակարանին մէջ: Սուրբան Մուրատի ար-  
շաւանաց ժամանակ (1635) իւր զօրքերէն  
ոմանք բռնելով երկու հայ մանուկներ այս  
գիւղս կը բերէին, և հասնելով Գժարազգիմ  
կոչուած բարձր քարանց գլուխը, մանուկ-  
ները կը խնդրեն որ քիչ մը ատեն ձեռքը-  
նին արձակեն, և միտսին ծայրերու ծայրն  
եղնելով, անօրինաց ձեռքերէն ազատելու  
համար իրենք զիրենք վար կը նետեն, և  
ապա ձորի մէջ թազնուած ջրխատոնեայք  
վերցնելով մարմինները, կը տանին կը  
թազեն Արզնի գիւղը: Գիւղիս մօտ, ձորի

Ա Ր Տ Ա Ն Ա Ն

**Ա**ՐՏԱՆ. ՊՂ. ARDAHAN. Ռ. АРДАГАНЬ.  
 — Հին և ամուր քաղաքաւան Գուգարաց  
 Համանուն գաւառի մէջ, Կուր գետոյն հիւսիս-  
 սային եզերքը, որ քաղաքին անուամբ Ար-  
 տահանի գետ եւ կը կոչուի: Կառուցուած  
 է բարձրաւանդակի մը կողերուն վրայ. ծո-  
 վու երեսէն բարձր է 5500': Գետոյն Հա-  
 բաւակողմն եւս կան շինութիւններ՝ որ կը  
 կազմեն քաղաքին մի փոքր մասը: Փայտա-  
 շէն կամուրջ մը իրարու հետ կը միացնէ

մէջ կան բազմաթիւ քարայրներ, որոց մէջ  
 կը պատուարուէին Արզնիի բնակիչք այլ-  
 ազգի բարբարոսաց ձեռքէն ազատելու հա-  
 մար: Արզնի թէև շատ անգամներ ենթակայ  
 է եղեր թշնամեաց յարձակմանց և անբը-  
 մանց, սակայն բոլորովին հայ բնակիչներէն  
 զրկուեր է զարուս մէջ: Այժմեան Ասորի  
 յունադաւան բնակիչք, հայկական հին և  
 կեղեցւոյ քարերով կառուցած են իրենց յա-  
 տուկ եկեղեցի: — Գիւղի մօտ կայ Քօս  
 աղբիւր կոչուած հանքային ջուր մը, որ  
 քօս և ըօր բժշկելու զօրութիւն ունի: —  
 Այրարատ, 288: Կեղարքունի, 223 — 230:



Արտահան:

Արտահանի կրկին մասերն: Քաղաքս ամրա-  
 ցած է 25 ոտք բարձր և 6՝ լայն պարիսպ-  
 ներով, ունի նաեւ քառակուսի մարտկոցներ  
 և աշտարակ մը: Բերրը կառուցուած է բարձր  
 դարեւանդին վրայ հիւսիսային արեւելեան  
 կողմը. ձեւով քառակուսի է. որ 30՝ բարձր  
 պարիսպներով և աշտարակներով երբեմն ամ-  
 րացած էր, բայց 1828ին Ռուսները բոլոր-  
 ովին խանդարեցին զայն և ամայացուցին:  
 Կ'ըսուի, թէ քաղաքս առաջին անգամ  
 կառուցած է Զաւախոս՝ Թորգոմայ թոռնոր-

դին, և նուիրեր է Ռւրուաց, անոր համար  
 Հուր կոչուած է, կ'ըսէ վրաց աշխարհագի-  
 րը. բայց նա շփոթած կը թուի թէ՛ անունը  
 և թէ դեպքը. վասն զի վրաց հին պատմիչն  
 Զուանշէր՝ Արտահանը նուանող Երուանդայ  
 Արշակունւոյ համար կ'ըսէ, թէ «բնակեցոյց  
 ի նմա մտրդ դիախօս և անուանեաց զնա  
 Քաշատուն». որ կոչուեցաւ նաեւ Քաջաց  
 քաղաք, և վրացիներէն եւս Քաջաց Յիւսէ,  
 այսինքն Քաջաց ընդ, և յայտնի է թէ  
 հմայք և հարցուկներ և թերեւ Հայոց Տրի

դից պաշտօնն հաստատեց աստ, վերոյիշեալ Արշակունի թագաւորն: Բազումառնեաց պաշազատութեան ժամանակ Արտաշանի մէջ կը նստէր կողայ իշխանը: — Ռուսաց 1828ին պատերազմէն առաջ, քաղաքս ունէր գրեթէ 400 տուն բնակիչ, որոց մէջ կային բազմաթիւ կաթողիկեայ Հայք՝ որք մեծաւ մասամբ գաղթեցին Ռուսաց բաժինը: Այժմ Արտաշան ունի 800էն աւելի բնակիչ, յորոց 457ը թուրք են, 172ը ռուս, 158 հայ և 48 յոյն: Քաղաքին կաթողիկեայ Հայք՝ ըստ հոգեւոր իշխանութեան կը վերաբերին Արզուիին թեմին, և ունին յատուկ եկեղեցի և դպրոց, իսկ Լուսաւորչական Հայք, խիստ սակաւաթիւ են, հազիւ 15 հոգի: Արտաշանի գլխաւոր վաճառքներն են ցորեն, պրտուղներ, ոչխարի մսոյ ապուխտ, փայտ, և այլն: Հայկազնեայց պետութեան վերնաշէնքիչ վերջ, քաղաքին մօտ, Հայք և Վրացիք նիզակակցութեամբ (Ռսաց և Քուչաց և առաջնորդութեամբ Փառնաւազայ, յաղթեցին Աղեքսանդրի Ազոն կուսակալին և անոր հեծելազորուն, և Մակեդոնացի Յունաց լուծը թօթափեցին:

Փուզարաց հին Արտախան գաւառի աւնուն այժմ սեփհակախուած է համանուն շրջանակին առաջին վիճակին, որոյ սահմանքն են Հս.Ն. Էրուշէթ, Ամ.Ն. Շաւշէթ, Ար.Ն. Չուխուրէթի և Ջաւախը: Կուր գետը կող գաւառն գաղով, կ'ընթանայ բուր վիճակին միջէն արեւմուտքէ դէպ ի հիւսիսային արեւելք, և դուրս կ'ենէ Ախալքալաքի սահմանները, ընդունելով հիւսիսային կամ ձախ կողմէն բազմաթիւ գետակներ, յորս նշանաւոր է Էրուշէթի գետակն: Երկիրն ընդհանրապէս աւափարակ է. կազմութեան պրոլուտտական է, շատ տեղեր կը տեսնուին կարմիր չեչաբարք: արեւելակողմը Չուխուրէթի սահմանները գտնուած խորաձորերը պորփիւրաքարէ են: Լեռները սովորաբար ապալեր են, և քիչերու վրայ կը տեսնուին նոճիներու և եղեմեաց անտառներ: Չմրան երկարութեան և վիճակին բարձր դրից պատնասու, դաշտաց բուսարեւութիւնը նուազ է. բայց բարեխառն կողմերն և մարգագետինք յստի և դաշա-

րազուարճ են, յորս յաճախ կը տեսնուին կանգառներ, և գեղեցկագոյն ծաղիկներ. ինչպէս բուքսուկ, երնջնակ, տերեփուկ, հրածաղիկ, շահուրամ, նուարտակ, եղնախոտ, և այլն: Կուրի ճախնախուտ ափունքներն՝ պարարտ արօտք են անդէոց: Արտաշանի գաւառն ի հնուան նախ Վրաց ձեռքն է եղեր, և սպա մերթ Հայոց և մերթ Վրաց. ասոնք մեր Արտաշէն թ թագաւորին հաճութեամբ՝ առնելով, հարկատու եղան Հայոց: Ռուսաց պատերազմէն առաջ խիստ բարգաւաճ էր վիճակ, բայց պատերազմի ժամանակ 1829ին սոսնակոխ եղաւ և շատ գեղեր ամայացան. այժմեան գեղերը գրեթէ բոլորն ալ այլապաքանակ են:

Ա Ր Տ Ա Ն Ո Ւ Ջ

ԱՐՏԱՆՈՒԳ կամ ԱՐՏԱՆՈՅՇ. Ռ. Արախուհ. — Քաղաքաւան Փուզարաց կղարջը գաւառի, և գլխաւոր տեղի այժմեան համանուն վիճակի: Կառուցուած է գտնիվերի մը վրայ, որոյ արեւմտեան կողմը է բարձրանայ ահպին բարձրաբերձ ժայռ մը, և վրան կայ ընդարձակ տափարակ մը, որոյ տարածութեան արամագիծը կը տեսն գրեթէ քառորդ ժամ: Այդ բարձրատափի վրայ կը տեսնուին հսկայ պատերու, բառանկիւնի շատարակներու, ամրաշէն աւազաններու, անտերու, և այլ գանազան գետնափոր շինութեանց փլատակներ: Արտանուշ թէ և նշանաւոր է բնական անմատոց գիրքօփն, սակայն շրջապատուած է նաեւ բոլորակ և ամուր պարսպով մը: Ունի երկփեղկ բերդադուռ մը, որու բարաւորին վրայ կը նշմարուի եղծուած և անընթեռնի արձանագրութիւն մը: Հիւսիսային կողմը գտնիվերին վրայ կան հին եկեղեցոյ մը որմերը, մեծամեծ քառակուսի քարերով, որոց ոմանց երկայնութիւնն է 10' և լայնքը 6', և զարմանք կ'ազգեն տեսողաց վրայ, թէ ինչպիսի՞նք արտարութեամբ շինողներն՝ այլ բարձրութեան վրայ հանած են վիթխարի քարերը: Քաղաքաւանին ստորոտէն կը վազէ Ճորոխի օժանդակ Արտանուշի գետն՝ որոյ ափունքն

գեղեցկապև զարդարուած են վարդենիներով, ուռնիներով, փշտոնիներով և այլ տեսակ ծառերով: Գետոյն երկու կողմը՝ ահագին ժայռեր և բլուրներ կը բարձրանան, որոնք կարծել կու տան թէ գետն ատենօք շատ մեծ բլայտով և ճիշդ ատոնց վրայէն հոսելով՝ զանոնք ողողեր և հեազհեաէ հարիւրաւոր կանգուն վար իջեր և: Ասոր պարզ ապացոյցներ են ժայռերու կողմնակի երեսաց վրայ եղած անթիւ քարայրներն, որոնց բերանին

վրայ մարդկային ձեռօք շինուած ամուր պատեր և ցցուած գերաններ կը տեսնուին: Տեղւոյս ժողովուրդք, աւանդութեամբ կը համարին, թէ այդ ձերպերու և այլերու մէջ թաղուած լինին հնազիտական թանկագին առարկաներ, բայց կը վախեն և չեն համարձակիր ներս մտնելու: Ընդհանրապէս, Արտանուշ՝ իբրև հին բերդաքաղաք մը, ունի ոչ սակաւ հնութիւններ, թէ՛ մէջը և թէ շրջակայքը, որոնք քննութեան և ուսումնա-



Արտանուշ.

սիրութեան կը կարօտին: — Արտանուշի հինաւուրց բերդը կը գտնուի բարձր քարածայրի գագաթան վրայ՝ զոր այլազգիք կեփերնէք զայնս կ'անուանեն, երկայնութիւնն է 400 սոք և լայնութիւնը 120—130 սոք: Այս բերդը կ'ելլըցուի միայն մէկ նեղ և զըծուարագնայի ճանապարհով՝ որ փորուած է ապառաժ լեռան վրայ. մինչև կէսը կարելի է զրաստով երնել, իսկ անկէ վեր սոքով կ'երթըցուի: Բերդիս մէջ կան հին ջրամբար և շինութեանց աւերակներ. յիշատա-

կաց արժանի է փոքր քարաշէն եկեղեցի մը. այժմեան աւերակներէն և մնացորդներէն կ'երեւի, թէ ժամանակա խիստ ամուր և հոյակապ է եղեր բերդս: Վախուշտ՝ ասոր կառուցանուին կոշուած թագաւորն, Եղարու վերջերը: Մրուան արաքացի զօրավարը Էրօ դարու մէջ Արտանուշը աւերեց, իսկ Աշտու կ'իւրապաղատը վերստին շինեց, և ինքն անոր մէջ նստաւ և մտաւ: Կոստանդին Պերփերուսն քաղաքս կը յիշէ ժ

պարտե կիսուն և կը գրէ Բեբո Ատրանուշ (Καστρος Ἀθροανουτζου), նոյնը կ'անուանէ նաեւ լայնախրամ և ամուր քաղաք և շահաստան վրաց, Հայոց, Ափխազաց և Ասորաց վաճառքներու Արտանուշի առաջին շինութիւնն և Հիմնարկութիւնն, ըստ մեզ, աւելի Հնագոյն կը թուի քան զՎախաանգ, և հաւանօրէն շինուած է ի Հայոց: Քաղաքին անունն՝ ըստ ոմանց կը թուի, աղաւաղութիւն Արտանուշ կամ աւելի ճիշդ Վարդանուշ անունն, որ մեր մէջ իրական աւուն է:

Արտանուշի բնակչաց թիւն այժմ կը հասնի 1000ի, յորոց 960ը են Հայ կաթողիկեայք, և մնացածը՝ 1828ի պատերազմի ժամանակ Ախալցխայէն դաղթող թրքեր են: Հայք ունին քարաշէն եկեղեցի մը Ս. Սահփանու՝ կառուցուած 1836ին, և վարժարան մը: Բնակչաց մեծագոյն մասն վաճառականութեամբ կ'ապրին. գերձակք, կօշիկարարք, դարբինք, ներկարարք, նպարավաճառք և այլ արհեստաւորք բոլոր Հայերն են, ոչ միայն քաղաքաւանին մէջ, այլ և ամբողջ վիճակի մէջ: Արտանուշի վիճակն ունի 51 գիւղ, յորոց միայն երկուքը, Նորաշէն (Եջնի-բարթթ) և Տանձոտ Հայաբնակ են: Երկրի բարեբերութիւնը բաւական նշանաւոր է: Քաղաքաւանն գտնուելով քարախիտ տեղ մը՝ կլիման այնչափ առողջարար չէ. ձմեռն կը տիրէ սաստիկ բեւեռային ցուրտ, և ամառն հասարակածի ջերմութիւն: Փլխաւոր բերքերն են գործն, գարի, կորեակ, եգիպտացորեն, ընտիր ծխախոտ, բանջարանոցի ամէն տեսակ բոյսեր և բազմազգի պտուղներ: Բայց ամենէն աւելի անուանի արդիւնաբերութիւնն է ամենապատուական գինի և օդի: Այս կողմերը մասնաւոր ինժամք կը տարուի նաեւ որթոց և թթենեաց, և եթէ գինեգործութեան արուեստն եւս լաւ գիտնային, կրնայինք ըսել, որ Արտանուշի գինին կրնայ մրցիլ աշխարհի ամենէն ընտիր գինիներու հետ: Բայց ի վիրոյշեանքն Արտանուշի վաճառականութեան զխաւոր նիւթերն են նաեւ ընտիր ընկուզի կոճղ, երկանաքար, կտաւատ, բուրդ, եզի, կովի, այծի, ուլի, գայլի, աղուէի, խոզի և գոմշու մորթ: Այս

նիւթերն կը ղրկուին Արցուն, Պատում, Տրապիզոն, Կ. Պօլս, Կարս, Կեօւա և Փեւնէք քաղաքներն. մորթերն կ'ուղարկուին նաեւ մինչեւ Մարօքիա և Փարիզ: Արտանուշ ներմուծած նիւթերն են կտաւեղէն, մետաքսեղէն, շուխայ, ապակեղէն, գործիներ, շաքար, սուճ, բրինձ, բամբակ և այլն: Տեղական արուեստներու մէջ նշանաւոր են մեծաւ մասամբ Հայկական իգական սեռի ձեռագործները: Հոս կը գործեն ազնիւ և փափուկ զենջակներ՝ մետաքսէ և բամբակէ, ընտիր և զիմացկուն կերպս մը՝ մասուսա կոչուած, նուրբ անձոտոցներ, մետաքսեղէն այլ և այլ գործուածներ, մաշկեղէն կապերաներ, և այլն: — Մշակ, Ժ. 136:

Հ. ՍՈՒԿԻԱՍ ԷԹՐՈՒԿԵԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ն Ն Հ Ա Յ Ե Բ Ե Ն Ի

(Շար. տես 264)

Ձայնաբանութիւն .

ՀԱՏԱՅ ԱՌԱՋԻՆ . ԱՐՏԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ն Ն լեզուի զբութեան համար կը ծառայէ բնականապէս Հին Հայերէնի այբուրենը: Սակայն վերջնայ տառերը՝ ժամանակի ընթացքով, մեծաւ մասամբ իրենց սկզբնական զբութենէն հեռացած են, ուստի պէտք է նոր և առաջ ասոնց կ'իրիկեան լեզուի համար ունեցած ձայնական զբութիւնը որոշ սահմանել: Այս բանին կը ծառայեն հետեւեալ միջոցք.

- 1) Արդի արտաբերութիւն Հին Հայերէնի .
- 2) արդի արեւմտեան Հայերէն գաւառաբարբառի ձայնական վիճակը, որ գէթ մասամբ՝ շարունակութիւն մը կրնայ համարուիլ կ'իրիկեանին .
- 3) Միջին Հայերէն բանաստեղծութեանց յանգը .
- 4) Գրութեան միջոց քանի մը կ'իրիկեան (եթէ բուն Հայերէն և եթէ օտար) բառերու փոփոխութիւնը .
- 5) Տառա-